

սրբուեցաւ Էջմիածնի Տաճարը, կանգնեցան աւերակ եկեղեցիները, բացուեցան դպրատուններ, վանքեր եւ կուսաստաններ, փրկանաւորուեցան զերիներ եւ մխիթարուեցան աղքատներ: Ազգին եւ Եկեղեցւոյ բարօրութեան համար չազահեցաւ Մովսէս, չխնայեց անձին, կատարեց հեռաւոր ճանապարհներ բախելու համար բռնապետներու դռները, անոնց դուրսը աղերսելու Ազգին համար, ժողովրդեան համար, Եկեղեցւոյ համար: Եւ բախտը ամենուրեք իր անբաժին ընկերն եղաւ: Այսպէս «յան շնչութենէ ի շնչաւորութիւն բերաւ» ոչ միայն կաթողիկոսական Աթոռը, այլ եւ Ազգը հոգեպէս եւ նիւթապէս:

Ի տես Մովսէս կաթողիկոսի վաստակներուն ժամանակակիցները միաբերան տուին անոր իբրեւ շնորհակալութեան, երախտագիտութեան եւ զնահատանքի ցոյց «Յրկըրդ Լուսաւորիչ Հայոց» պատուոյ անունը: Եւ մենք այս յորջորջանքը չափազանցութիւն չենք համարիր: Ի՞նչ պիտի ըլլար Հայոց Եկեղեցին, եթէ Նախարանամութիւնը չյարուցանէր Մովսէս մը Ժէ. դարու առաջին քառորդի քառսին մէջ: Ինձ դժուար է պատասխանել այս հարցման. բայց կրնամ ըսել, թէ առանց Մովսէսի պիտի չձնանէր Փիլիպպոս մը: Իսկ Մովսէս եւ Փիլիպպոս երկու փողփողուն աստղերն եղան Ժէ. դարու հոյ երկնակամարին վրայ: